

## **ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի շնորհավորական ուղերձը Հայոց բանակի կազմավորման 21-րդ տարեդարձի առթիվ**

*Արմավիրի մարզի հարգարժան բնակիչներ, Հայոց բանակի սպաներ, զինվորներ,*

Այսօր մենք հպարտ ենք, որ Հայոց պանծալի բանակի 21-րդ տարեդարձը մեզ նորից պարզել է համազգային սիրո և անմոռաց տոնական պահեր: Աշխարհին է հայտնի, որ մեր ազգային բանակի փառքի և հիացումի սխրանքները սրբագործվել են Արցախի գոյամարտում՝ հավաստելով հայ զինվորի ոգու արիությունն ու անսասան կամքը:

Վաղուց արդեն անժխտելի փաստ է, որ բանակը իր սրբազան պարտքով, ժամանակակից զինվածությամբ և ազնիվ նպատակներով դարձել է մեր ժողովրդի հաջողության ու մեր հայրենիքի հզորության աննկուն պաշտպանը: Բոլորելով լուսապսակ իր 21 տարին՝ նա երիտասարդի վիթխարի ներուժով տարեցտարի դառնում է ավելի ուժեղ ու ազդեցիկ, հավասարը հավասարի հետ ասելիք ու պահանջ ունի և դեռ էն գլխից գիտի իր առաքելության գերագույն իմաստը:

Թշնամուն սաստելով նրա իսկ որջում՝ մեր գորամիավորումներն այսօր պաշտպանական դիրքերում են՝ ցուցաբերելով նվիրում և աչալրջություն: Բանակը մեր պետության ամենօրյա զորակցությամբ, զինված ուժերի և նրա Գլխավոր հրամանատարի առաջնորդությամբ՝ արարելու հնարավորություն են տալիս բազմաչարչար, վաստակած ու հաղթանակած մեր ժողովրդին: Մեզ բաժին հասած բոլոր հաղթանակները ձեռք են բերվել ինքնամոռաց խիզախությամբ, փառքերով պսակված մեր զավակների կյանքի գնով: Իսկ այն նահատակները, ովքեր սեփական արյամբ փրկեցին հայրենի տունը, հողը, մորն ու մանկանը, ովքեր հանուն Հայաստանի ապագայի մնացին ռազմի դաշտերում, միշտ կլինեն մեզ հետ ու մեր շարքերում:

Այս հանդիսավոր պահին, խոնարհում, փառք ու պատիվ տալով բոլոր զոհվածներին, մեր կողքին պետք է զգանք նրանց ներկայությունը և հոտնկայս ու հպարտ՝ հարգենք նրանց հիշատակը:

Միրելի բարեկամներ, գաղտնիք չէ, որ աշխարհը, այդ թվում մեր տարածաշրջանը, կանգնած են լուրջ մարտահրավերների առջև: Մեր պետությունն ու երկրի ղեկավարությունը ձգտում են պահպանելու մշտական կայունությունը և ամրապնդելու թանկ գնով ձեռք բերված խաղաղությունը: Իսկ այդ ամենի գլխավոր երաշխիքը դարձյալ Հայոց բանակն է, պետության և բանակի միասնական կամքը, մեր ժողովրդի նվիրումն ու մշտական աջակցությունը:

2013 թվականը նույնպես վճռորոշ տարի է, նրա հիմքում Հայաստան երկիրը տեսնում է բարության և ապահով կյանքի հորիզոններ, իսկ մեր ժողովուրդն ակնկալում է կատարվածի ու ձեռք բերվածի շարունակականություն, երկրի շենացման գործում՝ նվիրական բաղձանքների իրականացում:

Միրելի բարեկամներ, այսօր, իսկապես, մեր տոնացույցի ամենապայծառ օրերից մեկն է, որով հպարտանալու իրավունք ունի մեզնից յուրաքանչյուրը: Ազգային բանակը մեր զինանշանի խորհուրդն է, մեր ներկայի ու ապագայի վստահելի կամուրջը:

Ուրեմն՝ փառք ու պատիվ մեր բանակին, նրա բոլոր ստորաբաժանումների անձնակազմերին, ովքեր զիջերուզօր պաշտպանում են Հայաստան երկրի սահմանները, իրենց միասնական հզորությամբ պատրաստ են դիմակայելու թշնամական բոլոր ոտնձգություններին:

Կեցցե՛, Հայոց ազգային բանակը՝ խաղաղության ամրապնդման և մեր ժողովրդի հպարտության 21-ամյա հսկան: